/վերանայված/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «ԳԱՎԱՌԻ ԱԿ.Ա.ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ
2025թ-ի մարտի 26-ի թիվ 25 ՆԻՍՏՈՒՄ
ՔՈԼԵՋԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
Կ. ԳՈՒՌՈՅԱՆ
«26» 03 2025թ.

ՀՀ ԿԳՄՍՆ «ԳԱՎԱՌԻ ԱԿ. Ա.ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԱՎԱՐՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԱԿԱՅԱԾ ՈՒՍԱՆՈՂԻ ՀԱՋՈՐԴ ԿՈՒՐՍ ՓՈԽԱԴՐՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են քոլեջում ուսանողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, ուսանողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած ուսանողի հաջորդ կուրս փոխադրման հետ կապված հարաբերությունները:

II ՈՒՍԱՆՈՂԻ՝ ԿՈՒՐՍԻՑ ԿՈՒՐՍ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԱՎԱՐՏՈՒՄԸ

1.1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերի ուսումնական բոլոր առարկաներից, մոդուլներից, ուսումնական և արտադրական պրակտիկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված ուսանողը փոխադրվում է հաջորդ կուրս:

2. Կուրսից կուրս ուսանողները փոխադրվում են տարբերակված ստուգարքների միջոցով, որոնք անցկացվում են յուրաքանչյուր առարկայի կամ մոդուլի համար նախատեսված վերջին դասաժամին՝ հաշվի առնելով ուսանողի ընթացիկ գնահատականները, և գնահատվում են 10 միավորային համակարգում: Տվյալ ուսումնական տարվա բոլոր առարկաներից /մոդուլներից/ 4-10 միավոր գնահատված ուսանողը փոխադրվում է հաջորդ կուրս: 1- 3 միավոր գնահատված ուսանողը տվյալ առարկան/ները/, մոդուլը/ները/ վերահանձնում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

3. Պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է տվյալ մասնագետի որակավորումն ապահովող մի քանի մասնագիտական մոդուլներից՝ համալիր քննության ձևով և գնահատվում է 20 միավորային համակարգում: 8-20 միավոր գնահատված և տվյալ կրթական ծրագրի ուսումնական պլանով բոլոր առարկաներից, մոդուլներից և ուսումնական և արտադրական պրակտիկաներից 4-10 միավոր գնահատված ուսանողները ստանում են միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/:

4. «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով ուսանողի ազատված լինելը չի ազդում նրա՝ հաջորդ կուրս փոխադրվելու կամ քոլեջն ավարտելու վրա:

III ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

1. Հանրակրթական հիմական ծրագրերի ավարտից հետո անցկացվում են պետական ավարտական քննություններ հետևյալ առարկաներից՝

1) Հայոց լեզու և հայ գրականություն/գրավոր/
2) Մաթեմատիկա /գրավոր/
3) Հայոց պատմություն /գրավոր/

2. Պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են մասնագետ դասախոսների կողմից, առաջադրանքների ձևով՝ ընդգրկելով 45-50 առաջադրանք: Գնահատումը կատարվում է 20 միավորային համակարգում:

«Ֆիզկուլտուրա» առարկայից նախատեսվում է անցկացնել ամփոփիչ ստուգարք՝ նորմատիվների հանձմամբ:

3. Պետական ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու կամ քննությանը չներկայանալու դեպքում, եթե դրանց ընդհանուր թիվը չի գերազանցում 3-ը, ուսանողը վերաքննություն է հանձնում քոլեջում քննաշրջանին հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում սահմանված ժամանակացույցին համապատասխան, հակառակ դեպքում հեռացվում է քոլեջից:

4. Ուսանողները պետական ավարտական քննական առարկաներից 1-3 միավոր ունենալու դեպքում չեն մասնակցում տվյալ առարկայի/ների/ /մոդուլների/ պետական ավարտական քննությանը/ներին/ և կարող են հանձնել հաջորդ երեք տարիների ընթացքում:

5. Քննությունների արդյունքները հիմք են հանդիսանում ուսանողի համապատասխան դիպլոմում քննական առարկաներից գնահատականներ նշանակելու համար:

6. 3 առարկաներից 1-7 միավոր գնահատված /այդ թվում վերաքննության արդյունքներով/, պետական ավարտական քննություններին չմասնակցած ուսանողները դուրս են մնում հաստատությունից:

7. ՈՒսանողները բոլոր ստուգարքները և քննությունները հանձնում են հաստատված ուսումնական պլաններին և ժամանակացույցերին համապատասխան, որոնց արդյունքները գրանցվում են քննական տեղեկագրերում, ստուգման գրքույկում, անձնական թերթիկում և դիպլոմի ներդիրում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ակադեմիական տեղեկանքում:

Պետական ամփոփիչ ստուգումն անցկացվում է ՀՀ ԿԳՆ-ի թիվ 638-Ն հրամանով հաստատված Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման կարգին համապատասխան:

8. Հարգելի պատճառով տարբերակված ստուգարքին կամ քննություններին չներկայացած ուսանողներին իրավունք է վերապահվում այն հանձնել ուսումնամեթոդական խորհրդի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ տնօրենի հրամանի համաձայն:

9. Կիսամյակային քննաշրջանում 1-2 առարկաներից «անբավարար» ստացած ուսանողը կարող է մարել ակադեմիական պարտքը (պարտքերը) ժամանակացույցով սահմանված մարման շրջանում քննաշրջանին հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում:

10. Ուսանողի դիմումի համաձայն, գնահատականը բարձրացնելու նպատակով, եթե այն չի գերազանցում երեք առարկան /մոդուլը/, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, բայց ոչ ավարտական կուրսի վերջին կիսամյակում, ուսանողին հնարավորություն է ընձեռվում վերահանձնել՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան:

10.1 Վերահանձման դիմումները ներկայացնել յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

10.2 Պրակտիկաների համար վերահանձնում չի նախատեսվում:

11. Երեք և ավելի առարկաներից/մոդուլներից/ կիսամյակի ընթացքում անբավարար գնահատականներ ունեցող ուսանողները հեռացվում են ուսումնական հաստատությունից:

12. Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ամփոփվում են ուսանողների առաջադիմության արդյունքները, հեռացման ենթակա ուսանողները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումների քննարկմանը:

13. Ուսումնական պլանով սահմանված ուսումնական և արտադրական պրակտիկաների օրագիր-հաշվետվությունները ուսանողները պարտավոր են հանձնել պրակտիկան ավարտելուց հետո: Պրակտիկայի գնահատումը կատարվում է 10 միավորային համակարգում:

14. Քննության չներկայանալու դեպքում քննական տեղեկագրում նշվում է « չի ներկայացել» :

15. Այն դեպքում, երբ ուսանողն առաջին անգամ բավարար մակարդակով չի կատարում տրված առաջադրանքը կամ բացակայում է և փաստորեն տվյալ արդյունքի գնահատում չի անցնում, կատարվում է արդյունքի կրկնակի հանձնում:

16 Կրկնակի հանձնման ժամանակ կարող է նաև գնահատման առաջադրանքը չփոխվել, կամ փոխվել միայն հանձնարարականի մեջ տրված տվյալների տարբերակը, բայց ոչ դրա բնույթը:

17. Առաջադրանքի երկրորդ անգամ կատարումը ոչ թե տեղափոխվում է ակադեմիական պարտքերի հանձնման շրջան, այլ կատարվում է հաջորդ արդյունքների հանձման ընթացքում:

18. Գնահատման արդյունքի արձանագրումը՝ կարողությունների գնահատման համար տրված առաջադրանքի կատարման արդյունքը, գրանցվում է «անցել է» կամ «չի անցել» նշումով:

19. Ուսումնական տարում ուսումնառած առարկաների, մոդուլների, պրակտիկաների և ԱՀՈՒ-ների ամփոփիչ /տարեկան/ գնահատական է համարվում տվյալ առարկայի /մոդուլի/ միջին թվաբանականը:

IV ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԱԿԱՅԱԾ ՈՒՍԱՆՈՂԻ ՀԱՋՈՐԴ ԿՈՒՐՍ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

1. Ուսանողի բացակայությունների հաշվառումը իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ կիսամյակների և ամփոփվում է ուսումնական պարապմունքների ավարտին:

2. Կիսամյակի ընթացքում 160 ակադեմիական ժամ անընդմեջ հարգելի բացակայած ուսանողներին հնարավորություն է ընձեռվում բաց թողնված ուսումնառության նյութերը լրացնել խորհրդատվական ժամերին:

3. Որևէ կիսամյակում անհարգելի 120 ակադեմիական ժամ անընդմեջ բացակայության դեպքում ուսանողի կիսամյակային գնահատականները չեն նշանակվում՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից և հեռացվում է քոլեջից: